

ganof, et) publié par M. Brosset, Académicien extraordinaire. S. Pb. 1840. Texte russe, et français en regard.

64. Լրպոյ, Պատմութիւն արևելեան կայսերութեան, նոր սպազրութիւն, ամբողջապէս կրկին աշքէ անցած, ուղղութեամբք և յաւելուածովք ըստ արևելեան պատմըչաց ի ԱԷն-Մարգենէ, Արձանագրութեանց և Գեղեցիկ դպրութեանց ակադիմիոյ անգամ:

Հասորքն Ա-ԺԳ. 1824-1832 հրատարակեալ են ի ԱԷն-Մարգենէ. և ԺԴ-ԻԱ. շարայարեալք ի Պրոսէ կրասերոյ:

## ԱԶԳԱՅԻՆ ՑԱՆՑԱԿՈՐՔ

### Թ ԱՇԽԵՏՑԽԱԿ

(Ցես յէջ 449)

**Ա**րբնանք ըսել թէ թերեւս բիւրաւոր ազգայինք եկեր գացեր են ի Վենետիկ և հազարաւորք ալ բնակեր, ԺԳ գարէ սկսեալ մինչեւ ի մեր դար, երբեմն ցանցառ և էրբեմն խիս (բազմամթի), և ընդհանրապէս հաճյ եղած են վենետաց, և ինչպէս հիմայ կ'ըստի՝ համակրելիք. միով բանի լաւ անուն թողած են. եթէ և ամենքն Պնառնի և Գէորգայ նման հանճար չեն ունեցեր, այլ զեռ շատերն ալ անոնց պէս յատուկ իրենց ազգային անուամբ կոչուեր են, և երբ իրենց հասարակութեան վրայօք խնդիր եղած է տէրութեան առջեւ՝ միշտ գոլուած և շնորհաց արժանի վկայուած են: Այսպան երկար զարոց և այսքան իրենց անընդհատ յաջորդութեան մէջ ի հարկէ բարոյապէս անհնար էր զայթակութեան չպատահել, կամ պարսաւելի գործք և յանցանք ալ շերեւնալ. սակայն ժամանակին և բաղմութեան համեմատ՝ քիչ անգամ հանդիպած են, և բարեբազզաբար այս բանիս նկամամբ դիւանք՝ որ ամէն այնպիսի գէպք ալ կը նշանակեն, քիչ բան ունին ազգայնոց համար. և երբ Դիւանք կ'ըսեմք՝ պէսք է յիշել վենետակոյ տէրութեան ահաւոր ասեաններն և պաշտօնք, որ բարոյականութեան վրայ խստութեամբ կը հակէին, մանր քննութիւններ կ'ընէին, նա եւ երբեմն տանջանոց և նեղ ու մութ բանաերով, երբեմն ալ քաղքին և տէրութեան սահմաններէն դուրս վլունաելով զյանցաւորս: — Իրեւ ի վկայութիւն բոլոր այս ըստածներու, և ի հաւասարիս ճշմարտութեան և ոչ պարզապէս հետաքրքրութեան՝ յիշենք ի պարագայիս դիպուածներն ալ:

**ԺԵ** զարուն սկիզբները (1508—1543 միջոց) Հայոց տան մէջ կը յիշուի համառօստի՝ վատանամբաւ կին մի, համանուն այնպիսի համբաւով ի հնուց հոգակելոյն, Հեղինեկ, թէ և շրատիր հայ, բայց ի բնակութենէն կարծուի. որոյ վերակացուն կամ զիխաւոր բնակիչն Աղեքսանդր՝ յատկապէս Հայ կոչուած, զիմելով յատեանա, նօտարաց առջեւ առած իրեք համատարմաց վը-կայութեամբ, ոչ միայն զիմատուհին՝ այլ և անոր բոզակը կարասիքը տունէն դուրս կը ձգէ. և այս ամէն գործոց, նօտարաց և վիկայից և դուրս ձգուած-ներուն համար եղած ծախցն կը վճարուի Հայոց տան եկամուտէն (1):

Այս զիպուածէս 60 տարի վերջը (1571) և յաջորդ տարիներու մինչեւ ի 1587, կը յիշուի այլայլ տեղ և ատեն՝ թակոր անուամբ Մէրտինցի Հայ վաճառական մի, որ թէ և (Յովհաննէս) քահաննայի որդի է եղեք, բայց փոխանակ իր հօր տուած օրհնովթեանց և խաղաղովթեանց՝ անկարգ և անզուսկ բերնով անվայել և հայհոյական խօսքեր հաներ է, ինչուան այնպիսի գերագիյն անձի մի դէմ՝ որ առաջին անձն է յետ Աստածոյ, յերկինս և յերկրի. ուսկից զայթակղելով զինքը բնակութեան ընդունող տանտէրն ի Մուռան կզզին՝ քաղքին քով, ուր աւանքն շինելու փուռեր, գործարաններ կան, և տանտէրն ալ նոյն արուեստն ունէր, իմացուց պատուասոր մարդու մի, նա ալ՝ թէ Պատրիարքին և Պապի Նուիրակին, և թէ հաւատաբննովթեան վերանկացուին, նոյնպէս նաեւ Հայհոյութեանց համար սահմանուած մասնաւոր պաշտօնէից, որք պատուիրեցին յիշեալ եկեղեցականց՝ քննել նախ Յակոբայ ամբաստանող կամ տանտէրը, յետոյ զինքն ամբաստանեալն: Քննովթինն և դասն ինչպէս եղած և աւարտած է, չեմ պոած. բայց զժբաղդամբար Յակոբայ մեղապարտ ըլլալն կը ճշմնրուի յետագայ ամբաստանովթեամբը և վճովվ ալ. հաւանօրէն Մուռանցի տանտէրն իր վարձորը հանեց տունէն: Նոյնպէս հաանական է որ նոյն Յակոբն է (այս տեղ հօրը անունն կամ մականունն չի յիշուիր) (2) որ իր նոմն անփարգ և անսպնձ բերպան Աղեքսանդր անուամբ ազգայնոյ մի հետ բնակելով ի Հայոց տունն, ոչ միայն զոնեցիս այլ և թաղականները անհանգիսա կ'ընէին և գայթակղեցնէին. տնպահն Այսոն (Էջ 148), յետ երկար համբերովթեան թողոքեց առ Հոգաբարձու Ս. Մարկոսի, որք պաշտպան էին Հայոց տան, վկայութեամբ քանի մի բնակչաց նոյն թաղին (Ս. Յովհաննու), յամենեան մարտի 1578. Հոգաբարձուք մէկ մէկ կանչեցին այս բանիս վկայողները, որոց առաջինն էր Ս. Յովհան եկեղեցւայ լուսարարն կիսասարիկաւագ (ի մայիսի 2), և կարզացին այդ երկաքին վրայ գրուած ամբաստանովթինները. նա ոչ միայն հաստատեց զայն երգմամբ, այլ և անմնցմէ աւելի շատ բան կայ, ըստ. այսպէս ուրիշ վկաներն ալ քննուեցան, որք աւելի կը

(1) Pro ejicienda res et bona Elenæ existentis in Domo computatis expensis Notariarum, pro examinatione Testium trium super fama et vita ipsius Elenæ.

(2) Քանի մի տարի առաջ (1568) յիշուի ուրիշ Յակոր Մէրտինցի մ'ալ, որդի Ալբեհիմայ:

մեղագրէին զԱղեքսանդր։ Թէ և հօգարարձուաց վճիռն չեմ տեսած, բայց անտարակոյս է իրենց արդար և խիստ զատաստանն, զոնէ ի Հայոց տունէն դուրս հանելն երկուքն ալ։ — Նոյն օրեր և նոյն տարին (ապրիլ 22, հոկտ. 7) Յակոբ ներկայացած է նօտարաց, բայց ի՞նչ ինդրոյ համար յայտնի չէ։ Յաւալին այս է, որ երկու տարի վերջը (1575, օգոստ. 22) Յակոբ նորէն կանչուած է յատեան Պաշտօնէից քննութեան հայոցութեանց, (Esecutori alla Bestemmia), որը քննելով իր փեմ եղած հայոցութեան առաջին ամբաստանութիւնը, նոյնպէս իրեն ալ երկու անգամ տուած պաշտամուղական գրուածքները, թէ և բոլորովին շղատապարտեցին զնա, բայց յանդիմանութեամբ պատուիրեցին որ ինչուան տասն տարի Հայոց տունը չմնոնէ, և եթէ յանդզնի մտնել՝ ի վենեսուկոյ և ի սահմանէն վնասուի հինգ տարի։ և եթէ այս արգելմանս ալ հակառակ գործէ՝ բանուփ. բռնողին 400 փոքր լիրայ տրուի վարձը անոր ստացուածներէն։ իսկ ինքն վեց ամիս այս պաշտօնարանին բանալ մնայ, անէկ ետեւ ալ՝ մինչեւ որ վճարէ զինքը բռնողին վարձը։ յետոյ նորէն աքարտուի։ — Զօրութեամբ վճռոյս յայս է որ Յակովը հեռացած է ի Հայոց տունէն. 1583-4ին յիշուի բնակած ի Ս. Մարիամ Խորոսիկ (S. Maria Formosa) թաղի, իրեւ պարտասէր (24 գրակատի) Անկիւրացի թուրքէ մի, որ քրիստոնէութիւն ընդունելով մկրտուեր և թուլմաս կոչուեր էր, բայց քիչ օրէն փախչելով՝ բռնուեր և բանտուեր էր, և անէկ կը խնդրէր (6 հոկտ.) որ ի Դրամասեղանի (banca) զրած ստակն հանուի, վճարուի պարտցն առ Յակովը, աւելցածն ալ պահուի։ — Նոյն տարին (1584, մարտ 5), Յակոբ ուրիշներու հետ կը վկայէ Գումինիկոս Ատանա կոչուած Հայոս մի արդարութեան, զոր Մետանացիք ծովու վրայ բռնելով տանջեր էին իրեւ այլազգի, և նա մանուանէ ազատելու համար՝ այնպէս ըստը էր, իսկ հիմայ Հայք ի վենետիկ վլոյցեցին նշմարտութիւնը, որ ծանօթ և բարի քրիստոնեայ է։ Դարձեալ նոյն տարին (14 ապրիլ) երկու խտալցուց կը յանձնէ, որ իր մէկ առնելիք առակը յԱնգոնա քաղաքի՝ պահանջեն անոնցիւ որոց քով գոտուէր, ազգային սափրիշի մի ձեռօց յանձնուած։ Քանի մ'օր վերջը (29 ապրիլ) իր ուրիշ առնելիքի մի համար (66 գովաստ) ուկանց շինողէ մի՝ իրաւարար կը զնէ մէկը՝ որ ինչուան իրեք ամիսն վճարել տայ, եթէ ոչ ինքն կրցածը պիսի առնու պարտականէն։ իսկ իր որ և է ուրիշ առնելիքները պահանջելու համար՝ գործակալ կը կարգէ զՄերտիչ Պարսկահայ՝ Սիմոնի յաջորդ տնպահը (յուլ. 7)։ — Երկու տարի վերջը (1586, մեպ. 29) գարձեալ գոտու Յակոբ առաջի նոստարի, ուր Բաղիշեցոյ մի հետ (Գարրիկի որդի կիրակոսի) երաշխաւոր կ'ըլլայ Աղամանի որդի Գեորգայ պարուացը (100 դուկատ առ Յովին. որդի ձանիբէկի) և կը վճարէ 60 դուկ. Գարբիչէլ ալ 40. և այս երկուքն ալ մէկմէկու հետ կը զաշնաղրին այս տուածնին ինչպէս իրարմէ առնելու, և այն։ — Յաջորդ տարին (1587, մարտ 10), նօտարի առջև թարգման կ'ըլլայ Յարութիւն Միհրիձան Բաղիշեցոյ, որ կը վկայէր՝ թէ Յոյնը ի Ծովացցոյ՝ նաստեն մէջէն, գողցան Հայոց ապրանքը և փախան։

Յակովիքեայ Մէրտինցոյ վերջի յիշատակն ի Վենետիկ է իր կտակն համառուս, զոր գրել տուեր է (իտալերէն) ի 24 ապրիլի 1587 տարւոյ (Մարկ—Անտոն Ֆիկովինոյ նօտարի). որով իրեն մէկ հատիկ ժառանգ և կտակակատար իր ամէն ստացուածոց և պահանջից կը հատաստէ՝ իր կինը կատարինէ անուամբ, դուսոր Անդրէի Ծոփուլայ (Docula), Ռւախնէ քաղաքին Արպա զեղէն, որ 350 դուկատի շափ օժիտ բերեր էր, Յակոր ալ 50 դուկատ վրան աւելցուցեր էր նօտարի առջեւ (ի 44 յուլ. 1579). բայց իր հայրենիքէն ելած ատեն՝ հօն թողեր է իր առաջին կնոջմէն՝ աղջիկ մի. կը պատուիրէ որ ի նշան սիրոյն՝ զրկէ անոր 5 դուկատ։ Նօտարն, ըստ հրամայեալ օրինաց, կը հարցընէ թէ բարերարութեան Տեղեաց ալ բան մի կը թողո՞ւ. կը պատախանէ. Այդ հոգը կը յանձնեմ կոտջա, ինչպէս որ ուզէ՝ այնպէս ընէ։ — Իրեք օրէն վերջը (ապրիլ 24) կը վախճանի. ի՞նչ հիւանդութեամբ կամ քանի՞ տարուան, և ո՞ւր թաղուիլն յայսնի չէ. որովհետեւ այն եւ կեղեցոյ (Նոր Ս. Յավիան, S. Giovanni Nuovo կամ iOlio) որոյ թաղին մէջ կը բնակէր, այն տարուան մեռելազիրըն կորած է, նոյնպէս մեծ դիւանաց մէջ ալ։ Բայց փափակելի և յուսալին այն է՝ որ բարի մահուամբ չնշած ըլլայ տուած զայթակութիւնները, և ըստ կտակագրութեանն աւանդաց ըլլայ զնողին « առ Աստուած և առ Երկնային արքունականս ». (Rendo l'anima a Dio et alla Corte celestia). — Իսկ իր ամենէն առաջին յիշատակն կ'երեւի որ ըլլայ վենետիկոյ հոչակաւոր մայր եկեղեցոյ (Ս. Մարկոսի) աւագ դրան քոյլի սեան վրայ փորելով գրուածն. « Յովաննիսի որդի Յակոր. Թվ. Ալ. » . որ է 1559, և այն սեանց և մօտի որոնց վրայ բազմաթիւ փորագրուած Հայոց անուանց մէջ՝ ոս հնագոյնն է ծանօթ թուականաւ։

Դոմինիկոս սպանող և սպանեալ։ — Ըստ քաղաքական օրինաց ամենէն յանցաւոր և շարագործ, և ըստ զործոյն պատուհասեալ մէկ հատ՝ Հայ, նախայիշեալ Յակովիք և անէկ առաջ յիշուած գովելի անձանց՝ ժամանակակից եղած է Դոմինիկոս անուամբ մէկն, որիի Յովիաննու, որոյ ուր տեղացի ըլլալն յայնի չէ, որովհետեւ իրեն համար եղած քննութեանց զըրուածքն ալ չկան կամ զառած չեն. իր անունէն կըրնայ կարծուիլ որ ի Զահկեցոյ ըլլայ, բայց քիչ մի յառաջ յիշուած Դոմինիկոս մ'ալ մեսունք՝ որ կիլիկեցի էր, և քաղքին անունէն Ատանա կոչուած, ինչպէս իր եղբայրն ալ, և ընկերներն ալ Սսեցի էին. ասկէ զատ երբեմն վենետիկ Հայոց յարմար անուններն իտակերէն կը թարգմանէին, որով կըրնայ ըլլա։ որ այս Դոմինիկոս կոչուածն ալ ըլլար Տիրատուր մի, կիրակոս մի, և այլնն Սակայն ինչ ալ ըլլայ անունն; զայն կրողն անարգեց ու սեւցուց, և այնքաց Հայոց բարի և պայծառ անուանց մէջ ի վենետիկ՝ բիծ մի ձգեց։ բայն դարձեալ այդ բիծն իրմով սկսած և իրմով վճարուած՝ ուրիշի վաս շրաւ, և օտարուսի բան մի համարուեցաւ Հայու համար այգափսի գործ, որ էր մարդապանութիւն, ապահովեան կամ ընչափրութեան պատճառաւ։ Գործոյն

հանգամանքն անծանօթ են, վերը յիշած զատաքննութեան գրուածոց անյայ-  
տութեան համար. յայտնին այս է, որ 1577ին վերջերը կամ յաջորդ  
տարւոյն առաջին օրերուն՝ այդ անարժան Հայն կը բնակի եղեր ի տուն մի  
(ի Ս. Մարիամ խորոաիկ թաղի) ուր բնակէր և խօսա Հասան աղայ կի-  
լանցի թուրք մի, հապատակ Պարսից և զործակալ Եղուսուֆ Ազէմ (Կամ  
Աձէմ) մէկու մի. ասոր քով եղած մետաքսի ծրարները և որիշ ապրանքներ,  
հաւանօրէն և ստակ, անսնելով Դամինիկ կը սպաննէ զնա, գոյց որիշ-  
ներու գործակցութեամբ ալ, ինչպէս կարծուեցաւ, այլ շըստուգուեցաւ: Տէ-  
րութեան Հասարակաց փաստաբան անուաննեալ պաշտօնէց մէկն (Avoga-  
dori de Comuni) բռնեց զնա և իմացուց եղեւնագործութեանց (al Crim-  
inal) ջան դատաւորաց, որը պատուիրեցին (10 յանուարի, 1578),  
եղածը լաւ ստուգելու համար՝ թէ զանիկա և թէ որիշ կասկածեալ ան-  
ձինքը սարպել, նաեւ տանջանօք, խոստուանելու ըրածնին կամ շըրածնին:  
Ասոնցէ մէկն էր Ծանեղոյ (Յովհաննակ, Zaneto fö de Andrea) թիա-  
վար կամ թիագործ մի, զոր փորձելով ի բանս ձգեցին, բայց չկարցան  
յանցանքն ստուգել, և առ ժամանակ մի բանտէն ազատելու հրաման տուին:  
ինչուան անցյն 28 դեռ Դամինիկոսի յանցաւոր ըլլալն ալ անսարակցոյ-  
չէր. նոյն օր Եղեւնագնին ատեանն պաշտօնէիւքն և ընկերակցօց, միան-  
գամայն 28 անձինք, խորհուրդ ըրին թէ արդեօք ստուգելու համար տանջել  
ատն զնա. մեծ մասն խորհրդակցաց (17) այսպէս ընելու քուէ տուին: Եր-  
կու օր վերջը, այս բանս հոգալու՝ զիխաւոր զրին իրենցմէ մէկը ֆիլիպ.  
Ալպէրդ կոչուած, (Capo nel caso dell'Armeno, Ph. Alberto) որ շու-  
տով կատարեր է ընելիքը, և պարտաւոր յայտներ է զիսմինիկ: Քանի  
մ'օրէն (5 փերք.) նորէն ժողովելով 13 նորհրդականը, 12 քուէիւց վճռե-  
ցին մահապարտութեան սոսկալի վճռու մի, այնպիսի յանցանաց գէմ սաստիկ  
և քիչ մ'ալ բարբարիկ օրինօք ժամանակին. այսինքն, յանցաւոր զնելով  
բեռանց մեծ նաւակի մէջ՝ անցընել քաղքին անուանի մեծ ծովային ջրանց-  
քէն, և հանել ի Փօքր Հրապարակը, հօն անոր ալ ձեռքը կարել և վզէն  
կախել, ու զինքը ձիու մի ազի կապած՝ քաշ տանիլ մեծ Հրապարակին մէջ,  
յետոյ տանիլ նոյն Փօքր Հրապարակին ժողեկերը եղած երկուց մեծ և հաստ  
սեանց մէջ տեղ (որը ինչուան հիմայ կանգուն են), և բարձրաւանդակի մի  
վրայ զլուիք կարել, յետոյ մարմինն ալ շորս կառը ընելով կախազա՞ի վրայ  
թողով բոլոր այն օր: Թէպէս այս պմզալի վճռու տուին, բայց կամ աղ-  
քայնոց աղայանօք կամ որիշի՝ նորէն միաբան քուէարկութեամբ. 14 ան-  
ձանց քիչ մի կակդացուցին. և հրամայեցին երկու օր վերջը առաւոտուն  
(7 փերք.) միայն տանել զյանցաւորը և կախել յիշեալ երկու սեանց մէջ,  
և ինչուան իրիկուն կախած թողով: Այնպէս եղաւ, և նոյն իրիկուն ալ  
թաղուեցաւ մարմինն, ինչ կերպ որ թաղուէին մահապարտը. և այսպէս կը  
նշանակէ Ս. Մարկոս եկեղեցւոյ մեռելազիրը (1):

1.1577 (1578) A di 7 (Feb.) fù appicato Domenego Armeno, d'ordine della  
Ecc. Capri de X. et fù sepolto.

Ութ ամիս վերջը Եռևուով Պարսիկն աղերսագրով ինպրեց ի Ծերակուտէն որ իր երկու ծրար մետաքսը՝ զոր յանձներ էր սպանեալ խօսայ Հասանայ, և դատաւորք զբաներ էին, տան իրեն. ծերակոյան ալ յանձնեց Վանառականութեան 5 Գիտնոց՝ քննել և ըստ արդարութեան կատարել.

Պարտքի համար շատեր բանտարկուած են, նաեւ երկար տարիներ, և յետոյ արձակուած. բայց թերեւս բանտողքն աւելի յանցաւոր ըլլան քան փորձանքի եկած բանտեալըն ։ Անիրաւութեամբ յանցաւորք յիշուին քանի մի, Հայոց բազմացած ատեն ի վենետիկ (ի կես ժի զարու). ինչպէս Պետրոս Աղամալ (1649) որ իսքենտէր (Աղեքանողը) անուամբ ազգակից մի ծեծով վիրաւորեր էր (5 յուլ.), ուրիշներու դրդմամբ. անոր համար բանտուած, և երաշխաւոր զննելով արձակուեր էր. խսկէնտէր բողոքեց աէրութեան (28 յուլ.), և իր արեան տոյժք պահանջելով՝ ինպրեց որ նորէն դատուի Փետրոս, ոչ առաջուան քննողներէն, այլ վաճառականութեան հոգցող 5 Գիտուններէն՝ որոց յանձնուած էին Հայոց խնդիրներն ։ Ծերակոյտն պատուիրեց ասածին քննող պաշտօնէից որ ստոյդ և երգուեալ տեղեկութիւն տան. զոր և անշուշտ ըրած են. բայց խնդիրն ինչպէս վերջացեր է, չեմ գտած :

Աւելի յանցաւոր Աստուծոյ էր՝ քան թէ մարդկան՝ թակոր Գայուստեան, որ հայոցութեանց համար դատապարտեցաւ (1651, յան. 15) երեք տարի թիսալարութեան ի խալէս (Նաւ). և թէ անկարող էր՝ վեց տարի մութ բանտի մէջ կենալու. նա կարող գտուեցաւ, և փոխանակ Յ տարւոյ 6 տարի աշխատեցաւ Տանտոլա կոչուած խալէի մէջ. որ երբ զարձաւ ի վենետիկ (1657ին), Հայը աղերս տուին տէրութեան (19 նոյեմբ.) որ ազատի Գալուստ, որով հետեւ վճռուածէն աւելի ատեն պատուած էր. խոստացան պարտիքերն ալ վճարել. տէրութիւնն զրեց Դալմատիոյ և Ալպանիոյ պաշտօնէից (22 նոյեմբ.) (որը արդէն վկայեր էին անոր ծառայութեանը և ազատութեան արժանի ըլլալուն), որ լաւ քննեն թէ արդեօք նորէն յանցանք ըրած է, կամ պարագ ունի, և մինչեւ որ այս բանս ստուգուի՝ նա մնայ ի մութ բանտի. ունէր պզտի պարտք մի 89 լիրայից, զոր Հայը պիստի վճարէին ։ Այս խնդրոյ վերջն ալ չեմ գտած. բայց անտարակայս ազատուած է Գայուստեանն. վասն զի Հայը ոչ միայն պարտքը վճարել խոստանային այլ և երաշխաւոր ըլլալ. տէրութիւնն ալ իր պատուիրազրին մէջ խնամով կ'ըսէ, որ Հայոց երախտաւոր ազգը համելը՝ իրեն (տէրութեան) ալ օգուտ է (1) :

Վենետիկոյ զգաստ (և երբեմն չափազանց ալ) տէրութիւնն՝ ամէն տեսակ բանի տեսող, քննող և պաշտօնեայ զիեր էր. բայց երբեմն երկու տարբեր բանի պաշտօնեայը՝ տարբեր կերպով ալ կը դատէին նոյն մէկ բանը, ինչպէս այս երկու յիշեալ զիազուածներէն ալ կը ըստ զուշակուիլ. երբեմն ալ իրենց

1 L'istanza si riconosce giusta, et riguarda anco il publico servitio nel consular Natione tanto benemerita.

շահուն համար խստութեամբ կր դատէին. ինչպէս հետեւեալ զիսպուածն ալ, որ վերսիշեալներէն առաջ եղած է (1648): Յակոր որդի Սահակայ և Պալի՝ որ այն ատեն Հայոց մէջ զիսպուոր սէնսալք էին, ազգայնոց և Պարսից համար երկու տուն վարձեր էին. Նոր արդարութեան կազուած պաշտօնեայք պարտաւորեցին զաննք իրը յանցաւոր. վասն զի տուն կամ իջեցան վարձքի տուողք (albergatori) պարտական էին, ըստ օրինաց, հարկ կամ մաքս մի վճարել. Պալի և Յակոր բողքեցին զրով առ Դուքսն (28 սեպտեմբեր), թէ իրենց ըրածն ոչ վարձքի տալ էր, այլ ձրի բնակութիւն տալ, որպէս զի յորդորուին Հայք աւելի շատ գալ և շատ վաճառք բերել: Տերութիւնն յանձնեց Ե Գիտնոց քննել. ասոնք արդարացուցին ամբաստանեալ ները, վլայելով որ անոնք ոչ թէ վարձք կ'առնուն ի վաճառականաց, այլ անոնց ծախուած վաճառքէն օրինաւոր սանսէրէքը. և պէտք չէ այս բանիս համար նորութիւն կամ արգելք մ'ընել Հայոց, այլ թողով իրենց ազատութեանը: — Քանի մի տարի վերջը (1650) այսպիսի բան մ'ըրին նոյն պաշտօնեայք ուրիշ երկու Հայ վաճառականաց գէմ (Մարտիրոս և Գիտրոս), որք 140 դուկատի տուն մի վարձեր էին իրենց ազգայնոց համար. բողքեցին Հայք իրենց նեղութիւն տուողներուն գէմ. աէրութիւնն ալ բառ առվորութեան յանձնեց Ե Գիտնոց. ասոնք ալ արդարացուցին զՀայս, մանաւանդ թէ յարմար և լաւ համարեցան որ Հայք միատեղ կենան քան թէ ցրուած. և շրլայ որ այս բանիս համար նեղուելով՝ փոխանակ ի վենետիկ գալու՝ երթան ի Լիվունոյ կամ ի Ճենովա:

Շարունակելի

## ԻՇԽԱՆԱՑ ԿՂԶԻՔ



**Վ**էապօլիս գաբրի և իսկիայ կղզիները ունի, կոստանդնուպոլիս ալ իշխանաց կղզիները: Նէապօլիսցիք որչափ կը պարծին իրենց ծովածոցին գեղեցիկ զարդուցը վրայ, նոյնչափ ալ Պօլսեցիք իրենց հանգստեան և զուարճութեան կղզեաց, որք հրաշալի տեսարան մը կը պարզեն, Մարմարայի ծովուն մուտքին վրայ: